ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան Բաղրամյան 26, Հեռ.(0252)2-43-93
կայք՝ www.aparan.amէլ.փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 1216-Ա

ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ- 106/23 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ <<ՍԹԵՅՋ>> ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով,որ Նոր տարվա միջոցառումների կազմակերպման կարիքների համար ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-106/23 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգով տոնածառի լույսերի և տնտեսական ապրանքների ձեռքբերման հայտարարված մրցույթի 1-ին չափաբաժով նախատեսված 5040000/ հինգը միլիոն քառասուն հազար/ՀՀ դրամ նախահաշվային գնով LED լույս տոնածառի Սնուցման Լարում (Վ)՝ 180-240V չթարթող անվամբ ապրանքի ձեռքբերման ընթացակարգի մասնակից <<Սթեյջ>> ՍՊԸ-ն հակադարձ աճուրդի փուլում ներկայացրել է ամենացածր գնային առաջարկը՝ 436009 /չորս հարյուր երեսունվեց հազար ինը/ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/ և այնուհետև նույն օրը՝ 21.11.2023թվականին, Ապարանի համայնքապետարանի պաշտոնական էլ փոստին ուղղարկել է թիվ 2023/04 գրությունը, որով հայտնել է,որ իր կողմից ոչ դիտավորությամբ ներկայացվել է սխալ գնային առաջարկ՝ 3 363 410 /երեք միլիոն երեք հարյուր վաթսուներեք հազար չորսը հարյուր տաս/ՀՀդրամի (առանց ԱԱՀ) փոխարեն ներկայացվել է 363 341/երեք հարյուր վաթսուներեք հազար երեք հարյուր քառասունմեկ/ՀՀ դրամ (առանց ԱԱՀ),ինչի արդյունքում անհանար է դառնում առաջին չափաբաժնով նախատեսված ապրանքների մատակարարումը: <<Սթեյջ>> ՍՊԸ-ն վերը նշված գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է հետագա պայմանգրի կնքումից: Միաժամանակ <<Սթեյջ>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտում դիմում հայտարարությունը՝ Հավելված 1-ը ստորագրված չի եղել և բացակայել է հրավերով պահանջվող հավելված 1.3-ը՝ իրական շահառուների հայտարարագիրը: Գնահատող հանձնաժողովի քարտուղարը առաջարկել է շտկել գնման հայտը մեկ աշխատանքային օրվա ընթացքում,սակայն հայտը չի շտկվել <<Սթեյջ>> ՍՊԸ-ի կողմից, որի հետևանքով գնահատող հանձնաժողովը 29.11.2023թ. նիստում հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը,ինչպես նաև հաշվի առնելով << ՍԹԵՅՋ >> ՍՊԸ -ի կողմից 21.11.2023թ. Ապարանի համայնքապետարանի պաշտոնական էլ փոստին ստացված թիվ 2023/04 գրությունը՝ մերժել է << ՍԹԵՅՋ >> ՍՊԸ –ի ներկայացրած հայտը և 06.12.2023 թվականին գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:
Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-106/23 ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի անդամների 15.12.2023թ. զեկուցագիրը, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը

Որոշում եմ՝

1. Սկսել գործընթաց ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ- 106/23 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի մասնակից <<Սթեյջ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:
2. Սույն որոշումը ենթակա է կատարման ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարի Ժ/պ Ա.Կարապետյան